

## ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

### ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Սույն հոդվածում հետազոտված են վարչական արդարադատության բաղադրիչների համալիր վերլուծության և գնահատման գիտական հիմունքները: Առաջադրվել են վարչական դատավարության արդյունավետությունը գնահատելու չափանիշներ, ինչը ունի ոչ միայն տեսական, այլև ընդգծված գործնական նշանակություն, քանզի հնարավորություն է տալիս գնահատելու կոնկրետ վարչական դատավարության ողջ համակարգը, բացահայտելու դրանում առկա բացերը, թերությունները, ինչպես նաև առաջադրելու ծագած խնդիրները հնարավորինս արդյունավետ լուծելու հիմնական ուղիներն ու եղանակները:

Հոդվածում համարժեք վերլուծության են ենթարկվել թեմային առնչվող ՄԻԵԴ-ի նախադեպային, ինչպես նաև Մահմանադրական դատարանի որոշումները, միջազգային փորձագիտական կառույցների դիրքորոշումները, նեղ մասնագետների արդի մոտեցումները, որոնց արդյունքում հնարավորինս համակարգված առաջադրվել են վարչական արդարադատության մոնիթորինգի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ չափանիշները: Ընդ որում, դրանց մշակման հիմքում դրվել են վարչական արդարադատության հայրենական իրավական հիմքերի և դրանց կիրառման պրակտիկայի առանձնահատկությունները:

Ըստ հոդվածում կատարված եզրահանգման՝ մոնիթորինգի մեթոդաբանության առկայությունը չի բացառում նոր ասպեկտներով հետազոտության հնարավորությունը, պարզապես զուտ գիտագործնական տեսանկյունից այն խիստ անհրաժեշտ է համալիր վերլուծություն ունենալու առումով:

**Բանալի բառեր** - *վարչական արդարադատություն, մոնիթորինգ, վարչական դատարավարություն, վարչական դատարան, վարչական վարույթ, արդար դատաբանության իրավունք, վարչական ակտ, դատական ակտի կատարում*

Հոդվածում համակարգված անդրադարձ է արված վարչական արդարադատության մոնիթորինգի մեթոդաբանության առավել առանցքային հարցադրումներին, և ներկայացված են դրանց գիտագործնական հիմքերն ու կիրառման սահմանները: Այսպիսի մեթոդաբանության կարիքը թելադրված է նաև վարչական արդարադատության այս կամ այն հարցադրման առնչությամբ տեսաբան իրավագետների կամ գործնական աշխատանքով զբաղված մասնագետների առաջ քաշած

եզրահանգումները, օրենսդրական լուծումները հնարավորինս համարժեք գնահատելու անհրաժեշտությամբ: Վերլուծության առանցքում դիտարկվել են նաև վարչական արդարադատությունում իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման նախապայմանը:

Արդարադատության յուրաքանչյուր տեսակին բնորոշ հիմնախնդիրները համակարգված բացահայտելու համար անհրաժեշտ է ունենալ բացառապես տվյալ տեսակի առանձնահատկությունների հաշվառմամբ մշակված մոնիթորինգի հիմնավորված մեթոդաբանություն: Իհարկե, հարցադրումների մի զգալի հատված համընդհանուր է և բնորոշ արդարադատության գործառույթի իրականացմանն ընդհանրապես, սակայն մոնիթորինգի ընդհանուր մեթոդաբանությունը չի կարող բավարար չափով պիտանի լինել՝ առանձնահատկությունների հաշվառմամբ կոնկրետ դատավարության կառուցակարգային և ընթացակարգային ասպեկտներով համալիր պատկերը ստանալու և հիմնախնդիրներն առանձնացնելու առումով:

Հաճախ որևէ իրավական հարցադրում հետազոտելիս իրավագետը կամա թե ակամա սահմանափակվում է իր իրազեկվածության, վերլուծական հմտությունների, երևույթներն ընկալելու աստիճանով, ուստի մենք ունենում ենք ոչ այնքան օբյեկտիվ պատկեր: Մեր խնդիրը բնավ հետազոտողի ակադեմիական ազատությունը սահմանափակելը չէ. պարզապես կարևորում ենք ցանկացած նորամուծություն անաչառ ու համալիր գնահատելու անհրաժեշտությունը՝ արդեն զուտ գործնականում դրանց ներդրման արդյունքների, դրսևորումների տեսանկյունից: Մոնիթորինգի մեթոդաբանության առկայությունը, ինչ խոսք, չի բացառում նոր ասպեկտներով հետազոտության հնարավորությունը, պարզապես զուտ գիտագործնական տեսանկյունից այն խիստ կարևոր է, որպեսզի առնվազն երաշխավորվի հետազոտության անհրաժեշտ համալիրություն, տեսական վերլուծությունների առանցքում լինեն նաև գործնական կյանքում առկա բոլոր խնդիրները՝ անկախ դրանց նկատմամբ հետազոտողի վերաբերմունքից: Այլ կերպ ասած՝ սույն մեթոդաբանությամբ հետապնդում ենք գնահատման համալիր համակարգ ներդնելու նպատակ՝ վարչական արդարադատության համընդհանուր խնդիրների և դրա առանձին ինստիտուտներին բնորոշ հարցադրումներով կատարված և նախապատրաստվող նորամուծությունների արդյունավետության տեսանկյունից:

Ընդհանրապես, վարչական արդարադատության մոնիթորինգի մեթոդաբանությունը ուղղակիորեն առնչվում է իրավունքի գերակայության առավել ամբողջական ընկալմանն ու ներդրմանը:

Այս հոդվածում կբավարարվենք վարչական արդարադատության գնահատման համընդհանուր չափանիշների պարզաբանմամբ, որոնք կարևորագույն տեսական հիմք կլինեն նաև առանձին ինստիտուտների առնչությամբ ակնկալվող մոնիթորինգ իրականացնելու տեսանկյունից:

Այժմ առանձնացնենք այն հարցադրումները և դրանց առնչվող չափանիշները, որոնք, մեր պատկերացմամբ, առավել առանցքային են վարչական արդարադատության արդյունավետության համալիր գնահատման առումով:

1) Վարչական դատարան դիմելու մատչելիությունը չի կարող ինքնըստինքյան դիտարկվել իբրև արդարադատության մատչելիության համալիր բաղադրիչ, առավել ևս՝ արդար դատաքննության իրավունքի հիմնական ցուցիչ: Վարչական արդարադատությունը հարկ է դիտարկել ոչ թե որպես մարդու իրավունքների և ազատությունների առաջնային, այլ այնպիսի լրացուցիչ միջոց, երբ հանրային իշխանությունը, փաստորեն, սպառում է արտադատական կարգով պաշտպանության բոլոր անհրաժեշտ քայլերը: Իհարկե, մարդու իրավունքների դատական պաշտպանությունը համարվում է առավել հուսալի, սակայն դա ոչ թե բացառում, այլ պարտավորեցնում է, որ հանրային իշխանությունները հնարավորինս հետևողական լինեն վարչարարության որակի, այդ ոլորտում արդյունավետ ու անաչառ արտադատական վերահսկողության բարելավման, վարչական մարմինների հետ փոխհարաբերություններում անձանց անհարկի չձանրաբեռնելու հարցերում և այլն:

Ընդ որում, հիմնական ուղղությունը պետք է համարել ոչ այնքան իրազեկվածության բարձր մակարդակը (ինչը ոչ միայն անհարկի ծախսեր է ենթադրում, այլև անարդարացի բեռ է մասնավոր անձի պարագայում), որքան այնպիսի կառուցակարգերի և ընթացակարգերի կիրառումը, երբ տարաբնույթ վարչարարության հարցերով բավարար է լինում դիմել «մեկ պատուհանի» սկզբունքով գործող վարչական մարմնի: Այս մեթոդաբանության պարագայում մասնավոր անձը ձերբազատվում է բյուրոկրատական անտեղի քաշքշուկներից, մի վարչական մարմնից մեկ այլ վարչական մարմին փաստաթղթեր փոխանցելու անմիտ պարտականություններից, իսկ վարչարարության իրականացումը ոչ թե «փոշիանում է» մեծ ներուժ կիրառող հանրային իշխանության բազմաթիվ մարմինների գործունեության համատեքստում, այլ երաշխավորվում է համակարգված ու ներդաշնակ աշխատանքի շնորհիվ:

Բոլոր դեպքերում, վարչարարության հետ կապված վեճերի արտադատական քննության ամենակատարյալ կառուցակարգերի ներդրման պարագայում չի կարելի բացառել արդյունքներից դժգոհ մասնավոր անձին դատարան դիմելու իրավունքի երաշխավորումը<sup>1</sup>:

2) Վարչական արդարադատության պարագայում արդարադատության մատչելիությունը հատկապես կենսունակ է, երբ հատուկ երաշխիքներ են սահմանվում առավել խոցելի խավերի ներկայացուցիչ

<sup>1</sup> St' u Rekomendatsiya Rec (2001)9 Komiteta ministrov gosudarstvam-chlenam ob альтернативных судебным разбирательствам разрешения споров между административными органами власти и частными лицами, Совет Европы, 5 сентября 2001 г., раздел II, п. iii. URL: [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=Rec\(2001\)9&Language=lanRussian&Ver=original&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=Rec(2001)9&Language=lanRussian&Ver=original&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864)

ների համար, քանի որ դատավարության հենց այս տեսակի դեպքում է, որ վարչական մարմնի՝ դե ֆակտո ունեցած առավելությունների (առնվազն անհրաժեշտ տեղեկատվությանը տիրապետելը, նպատակային ուսումնասիրություններ կատարելու, թանկարժեք փորձաքննություններ իրականացնելու կամ նշանակելու ներուժը, հանրային ծառայության մեջ ընդգրկված կոնկրետ ոլորտի նրբություններին տիրապետող իրավագետների առկայությունը և այլն) համատեքստում ընդգծվում է խոցելի խմբերի ներկայացուցիչներին համալիր լրացուցիչ արտոնություններ վերապահելու անհրաժեշտությունը: Իհարկե, այդպիսիք են՝ համարվում դասական այնպիսի նախաձեռնություններ, ինչպիսիք են՝ իրավաբանական անվճար օգնությունը, պետական տուրքից ազատելը և այլն, սակայն չպետք է անտեսենք, որ խոցելի խավն ավելի հաճախ տուժում է վարչարարությունից<sup>2</sup>:

Ինչևէ, յուրաքանչյուր երկրում նպատակահարմար է մշակել *արդյունավետ դատավարության* չափանիշների այնպիսի համակարգ, որը կներառի բոլոր այն գործոնները, որոնք կանխորոշում են արդարադատության յուրաքանչյուր բաղադրիչի կենսունակությունը՝ սկսած մատչելի պետական տուրքից, վերջացրած դատավարական կանոնների պարզությամբ:

3) Անկախ իրավախախտումների դասակարգման մեթոդաբանությունից, այսինքն՝ անկախ նրանից, թե վարչական զանցանքը դիտարկվում է որպես իրավախախտման ինքնուրույն տեսակ, թե՞ քրեաիրավական իրավախախտման տարատեսակ (քրեական զանցանք), վարչական զանցանքների վերաբերյալ գործերը կարող են վարչական արդարադատության շրջանակներում քննության առարկա լինել միայն այն կանոններով և երաշխիքներով, որոնք նախատեսված են քրեական դատավարության կանոններով: Անընդունելի է, երբ «ex officio» սկզբունքով դատարանը հարկադրված է լինում ի պաշտոնե պարզել իրավախախտման հանգամանքները, ինչը բացառապես բնորոշ է քրեական հետապնդում իրականացնելուն:

4) Վարչական դատավարությունում երեխաների իրավունքների պաշտպանության հարցադրումները պետք է առանցքային համարվեն ոչ միայն այն դեպքում, երբ նրանք հանդես են գալիս որպես դատավարության անմիջական մասնակիցներ, այլև երբ գործով շոշափվում են այնպիսի փաստեր և կարող են ընդունվել այնպիսի դատական ակտեր, որոնք անուղակիորեն վերաբերում են նրանց իրավունքներին: Երեխաների լավագույն շահերի պաշտպանությունը ենթադրում է, որ նա-

---

<sup>2</sup> St' u Per Bergling, Lars Bejstam, Jenny Ederlöv, Erik Wennerström, and Richard ZajacSannerholm. Rule of Law in Public Administration: Problems and Ways Ahead in Peace Building and Development [Верховенство права в деятельности государственной администрации: проблемы и перспективы формирования и роста], Folke Bernadotte Academy, 2008, էջ 16-18. URL: [http://folkebernadotteacademy.se/Documents/Kunskapsomr%C3%A5den/RuleofLaw/Rule\\_of\\_Law\\_in\\_Public\\_Administration.pdf](http://folkebernadotteacademy.se/Documents/Kunskapsomr%C3%A5den/RuleofLaw/Rule_of_Law_in_Public_Administration.pdf)

խապաստվությունը հարկ է տալ այն տարբերակին, որի պարագայում երեխան առավել շահեկան վիճակում է հայտնվում:

5) Պաշտոնյաները հաճախ են ելակետ ընդունում այն թյուր կարծիքը, թե իբր որոշ լիազորություններ իրականացնելիս իրենք օգտվում են անսահմանափակ հայեցողությունից: Ընդ որում, այդպիսի թյուրըմբռնման հիմք են օրենսդրական այն կարգավորումները, որոնք չեն սահմանում, թե այս կամ վարչական ակտն ընդունելիս վարչական մարմինը ինչ փաստական հանգամանքներ պետք է հաշվի առնի: Վարչական արդարադրության որակի մասին կարելի է համարժեք դատողություններ անել միայն այն դեպքում, երբ ելակետ է ընդունվում ոչ թե վերը նշված թյուր մեկնաբանությունը, այլ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 6-րդ հոդվածով ամրագրված հայեցողության սահմանափակման սկզբունքը, ըստ որի հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

Չափազանց կարևոր է հանրային իշխանությամբ օժտված յուրաքանչյուր պաշտոնյա գիտակցի, որ ինքը որևէ հարցում օժտված չէ անսահմանափակ հայեցողությամբ. այդպիսին պարզապես գոյություն չունի: Բնորոշ է «Meltex Ltd. և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի» (Meltex LTD and Mesrop Movsesyan v Armenia) գործով ՄԻԵԴ-ի վճիռը, որով արձանագրվեց, որ ազգային վարչական որևէ մարմին, այդ թվում՝ Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, չի կարող օժտված լինել բացարձակ հայեցողությամբ և այդ մտայնությամբ որոշումներ կայացնել<sup>3</sup>:

Վարչական մարմինը հայեցողական լիազորություն իրացնելիս շատ ավելի պատասխանատու կարգավիճակում է հայտնվում, քանի որ յուրաքանչյուր դեպքում պետք է ելակետ ընդունի հայեցողության սահմանափակման սկզբունքի պահանջները և կարողանա հիմնավորել, թե ինչու է ինքն ընտրել այս կամ այն տարբերակը: Նույնիսկ այն դեպքում, երբ հիմնավորումը փոխկապակցվում է պետական կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքի հրապարակման արգելքի հետ, միննույն է, պաշտոնյան պարտավոր է հիմնավորել այն, ինչը պահպանվում է գաղտնիության ռեժիմով, որպեսզի հնարավոր լինի երաշխավորել ներգերատեսչական անհրաժեշտ վերահսկողություն:

6) Էական նշանակություն ունի պետական կամ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունների շրջանառության սահ-

<sup>3</sup> Տե՛ս Meltex LTD and Mesrop Movsesyan v Armenia [Meltex Ltd. և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի], ECtHR, 17 June 2008:

մաններին և կարգին առնչվող հարցադրումների իրավական արդյունավետ կարգավորումը՝ նկատի ունենալով, որ դրանք վարչական դատավարությունում առավել լայն կիրառում ունեն: Անհրաժեշտ արդյունավետություն ապահովելու տեսանկյունից հարկ է գաղտնիք կազմող տեղեկատվության արտահոսքը սահմանափակել ոչ թե ձևական, այլ իրական կարգավորումներով: Մասնավորապես, միայն դոնփակ նիստերի գաղափարը, ըստ էության, չի լուծում այդ խնդիրը, քանզի նախապատրաստական փուլում կողմերը ոչ միայն անարգել ծանոթանում են այդպիսի տեղեկատվությանը, այլև չեն ստանձնում դրանք չտարածելու պարտավորություն, ինչը հատուկ է դոնփակ դատական նիստերին: Արդյունքում, օրենքով պահանջվող գաղտնիք հրապարակելու համար անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվում արդեն այն ժամանակ, երբ դրանք հասանելի են եղել դատավարության մասնակիցներին, իսկ վերջիններս էլ չեն նախազգուշացվել դրանք հրապարակելու արգելքի մասին:

7) Արդար դատաքննության իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական հիմքերը, որոնք վերաբերում են քրեական կամ քաղաքացիական դատավարությանը, հավասարապես տարածվում են նաև վարչական դատավարության վրա: Այս մտեցումը ամրագրվել է ինչպես Մահմանադրական դատարանի որոշումներով, այնպես էլ միջազգային դատական ատյանների և կազմակերպությունների իրավական փաստաթղթերով: Այսպես, ՄԻԵԴ-ը վերջին երեք տասնամյակում կայացրած որոշումներով հստակ ամրագրում է այն մտեցումը, որ միջազգային և ազգային դատավարական երաշխիքները, անկախ դրանց աղբյուրներից ու դատավարության կոնկրետ տեսակին վերաբերելուց, հավասարապես կիրառելի են նաև վարչական դատավարության նկատմամբ<sup>4</sup>:

Իհարկե, առանձին գործերի առնչությամբ ՄԻԵԴ-ը վերապահումներ է արձանագրել, հատկապես երբ խոսքը վերաբերում է հարկային քաղաքականության ոլորտին, օտարերկրացիների վտարմանը և ընդհանրապես վարչական սանկցիաներ կիրառելուն, սակայն անգամ այս դեպքում ՄԻԵԴ-ը ելակետ է ընդունել այն դիրքորոշումը, ըստ որի՝ քրեական հետապնդումների համատեքստում մեղադրյալների համար ամրագրված իրավական երաշխիքները հավասարապես կիրառելի են վարչական զանցանքների համար հետապնդվող անձանց նկատմամբ<sup>5</sup>:

<sup>4</sup> Sté u, օրինակ, Casanovas v France [Касановас против Франции], HRC Communication 441/1990, UN Doc CCPR/C/51/D/441/1990, 26 July 1994, Garcia Pons v Spain [Գարսիա Պոնսը Իսպանիայի դեմ], HRC Communication 454/1991, UN Doc CCPR/C/55/D/454/1991, 1995, Perterer v Austria [Պերտերեր Ավստրիայի դեմ], HRC Communication 1015/2001, UN Doc CCPR/C/81/D/1015/2001, 20 July 2004, պարագրաֆ 9.2., Анни Эреля и Йоуни Някяляйярви против Финляндии], HRC Communication 779/1997, UN Doc CCPR/C/73/D/779/1997, 24 October 2001, և այլն:

<sup>5</sup> Sté u, օրինակ, Scope of Article 6 § 1 of the Convention Under its Civil Head, According to the CaseLaw of the European Court of Human Rights, Bureau of the European Committee on Legal Co-Operation, 8 September 2011, [http://www.coe.int/t/dghl/standardsetting/cdcj/CDCJ\\_Documents\\_2011\\_en.asp](http://www.coe.int/t/dghl/standardsetting/cdcj/CDCJ_Documents_2011_en.asp).

Նշենք, որ վարչական դատավարության նկատմամբ արդար դատաքննության իրավունքի երաշխիքների և դատավարական կանոնների կիրառման հարցում միասնական դիրքորոշում աստիճանաբար է ձևավորվել: ՄԻԵԴ-ն սկզբնապես հակված էր այն դիրքորոշմանը, որ, օրինակ, հանրային ծառայողների ծառայության անցնելու, առաջիադասման և նմանաբնույթ այլ հարցերի հետ կապված վեճերի վրա «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքի իրավական երաշխիքները կիրառելի չեն: Առաջին անգամ այդ դիրքորոշումն արմատապես վերանայվեց Փելլեգրեն Ֆրանսիայի դեմ գործով կայացված վճռով<sup>6</sup>: Իսկ արդեն հետագա դատական ակտերով ՄԻԵԴ-ը զարգացրեց այն դիրքորոշումը, որ վարչական արդարադատության դեպքում պետք է գործեն իրավական ավելի հուսալի երաշխիքներ, որոնցից առանցքայինը համարվեց ապացուցման բեռը վարչական մարմնին վերապահելու վերաբերյալ դրույթը<sup>7</sup>:

8) Արդար դատաքննության իրավունքի բաղադրիչներից է նաև իրավակիրառ պրակտիկայի միասնականությունը երաշխավորելը: Փաստորեն, օրենքի միատեսակ կիրառում ապահովելը Սահմանադրությամբ վերապահված է Վճռաբեկ դատարանին (171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ), սակայն վերջինիս կարգավիճակը թույլ չի տալիս համալիր իրագործել այդ առաքելությունը: Վերջին հաշվով, Վճռաբեկ դատարանը կարող է անդրադառնալ իրարամերժ դատական ակտերի խնդրին միայն այն չափով, որ չափով դրանց առնչությամբ ներկայացվում են քննության ընդունելու հիմքերը բավարարող վճռաբեկ բողոքներ:

Պրակտիկայում, ցավոք, անհարկի շատ են այն դեպքերը, երբ միևնույն լրջագույն իրավական հարցի առնչությամբ (օրինակ պետական գնումներին վերաբերող իրավական ակտերի վիճարկման դատական ենթակայությունը, վարչական ակտերի շրջանակը, կասեցման առնչությամբ միջանկյալ դատական ակտեր կայացնելու անհրաժեշտությունը և այլն) դատական պրակտիկայում դրսևորվում են խիստ հակասական մոտեցումներ: Ընդ որում, նշված գործերով բերված վերաքննիչ բողոքներն առանձին դեպքերում անգամ քննության չեն ընդունվել, ինչն է՛լ ավելի է ընդգծում բարձրացված հարցի կարևորությունը:

Բոլոր այն դեպքերում, երբ օրենքի կիրառման միասնականություն ապահովելը բավարար չափով չի երաշխավորվում սահմանադրական և օրենսդրական հիմքերով, հարկ է հավուր պատշաճի վերանայել դրանք և ներդնել միատեսակ կիրառման համար անհրաժեշտ, գործնական նշանակություն ունեցող իրավական լծակներ: Այդպիսիք, օրինակ, կարող են լինել բողոքների ընդունելության հիմքերի վերանայումը, որի դեպքում հարկ կլինի բավարար համարել ոչ միայն Վճռաբեկ

<sup>6</sup> St' u Pellegrin v France [Պելլեգրեն Ֆրանսիայի դեմ], ECtHR, 8 December 1999:

<sup>7</sup> St' u, օրինակ, Vilho Eskelinen and Others v Finland [Վիլյո Էսկելինեն Ֆինլանդիայի դեմ], ECtHR, 19 April 2007, պարագրաֆ 62:

դատարանի՝ նախկինում արտահայտած դիրքորոշումներին հակասելու, այլն պարզապես միևնույն ատյանի դատական ակտերի միջև առերևույթ առկա հակասության փաստը: Կարևոր ենք համարում նաև նմանաբնույթ հարցերով խորհրդատվության համար Վճռաբեկ դատարանին դիմելու իրավական հիմքերի ներդրումը, ինչը բխում է վերջինիս սահմանադրական կարգավիճակից:

Կարևոր է ընդգծել, որ խոսքը բնավ դատավորի ողջամիտ հայեցողությունը սահմանափակելու մասին չէ, այլ այն իրավիճակի, երբ կոնկրետ վարչական գործով դատական ակտը բացառապես կախվածության մեջ է դրվում այս կամ այն դատավորի մոտեցումներից: Իհարկե դատավորը զրկված չէ ողջամիտ հայեցողություն դրսևորելու հնարավորությունից, սակայն հարկ է ներդնել այնպիսի կառուցակարգ, որի դեպքում դատավորը առնվազն կարողանա հենվել այդ խնդրահարույց հարցերի առնչությամբ վերադաս դատական ատյանի ամրագրած դիրքորոշումների վրա: Հակառակ պարագայում կարող ենք արձանագրել, որ իրավական թերի լուծումների հետևանքով խտրականության արգելքի սկզբունքի շրջանցման լայն հնարավորություն է ստեղծվում<sup>8</sup>:

9) Վարչական արդարադատություն իրականացնող դատական ատյանների անկախության աստիճանը պետք է զգալիորեն տարբերվի ընդհանուր իրավասության դատարանների անկախության աստիճանից: Հնարավոր չէ խոսել դատական լիարժեք անկախության մասին դատական այն ատյանների պարագայում, որոնք հուսալի կառուցակարգային ու ընթացակարգային միջոցներով անկախացած չեն հանրային իշխանության այն մարմիններից, որոնք նույն դատական ատյաններում իրենց համար խիստ պատասխանատու գործերով հանդես են գալիս որպես պատասխանողներ: Տարբերակված մոտեցման անհրաժեշտությունը համարժեք ընդգծված է նաև Մարդու իրավունքների և ժողովրդավարական ինստիտուտների բյուրոյի իրավական փաստաթղթերում<sup>9</sup>:

Անկախության ու հատկապես անաչառության տեսանկյունից եական նշանակություն ունի նաև դատավորի բացարկի ինստիտուտը: Այս հարցում հարկ է ելակետ ընդունել այն մեկնակետը, ըստ որի՝ դատավորը բոլոր դեպքերում է պարտավոր անաչառ լինել, անգամ եթե կան անաչառությունը կասկածի տակ դնող գործոններ, ուստի բացարկի հարցը քննարկելիս ոչ թե ելակետ է ընդունվում այն, թե որքանով կարող է դատավորն անաչառ լինել, այլ այն, թե ինչպիսին կլինի անկողմնակալ դիտորդի ընկալումը: Ցավոք, Մահմանադրական դատարանում, երբ քննարկման առարկա է դառնում որևէ դատավորի ինքնաբացարկ հայտնելու հարցը, որպես կանոն, այն անհիմն դիրքորո-

<sup>8</sup> St u Hoogendijk v the Netherlands [Հոգենդիկը Նիդերլանդների դեմ], Decision as to the Admissibility of Application No. 58641/00, 06 January 2005; D.H. and Others v Czech Republic [D.H. և մյուսները Չեխիայի Հանրապետության դեմ], ECtHR, 13 November 2007, պարագրաֆ 187:

<sup>9</sup> St u Рекомендации киевской конференции по вопросам независимости судебной власти в странах Восточной Европы, Северного Кавказа и Центральной Азии, БДИПЧ ОБСЕ, Киев, 23-25 июня 2010 г. URL: <http://www.osce.org/ru/odihr/71179>



շումն է արտահայտվում, որ իբր անաչառության հարցը դատավորն է ինքնուրույն գնահատում, ուստի եթե գտնում է, որ ի վիճակի չէ անաչառ լինել, ինքնաբացարկ է հայտնում: Մինչդեռ միջազգային իրավական, ինչպես նաև ազգային օրենսդրությամբ ամրագրված է բոլորովին այլ չափանիշ. մասնավորապես՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք *անկողմնակալ դիտորդի մոտ* (ընդգծումը մերն է – Գ. Դ.) կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ»: Այլ կերպ ասած՝ եթե անգամ դատավորը անվերապահորեն վստահ է, որ կարող է կոնկրետ գործով լինել անաչառ, պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե անկողմնակալ դիտորդի մեջ ծագել է ողջամիտ կասկած դատավորի անաչառության վերաբերյալ: Ըստ այդմ էլ այս ոլորտում մոնիթորինգի օբյեկտ պետք է լինի ինչպես օրենսդրությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկան:

Ինքնաբացարկի նկատմամբ բավականին խիստ պահանջներ են առաջադրված նաև ՄԻԵԴ-ի վճիռներով<sup>10</sup>:

10) Վարչական դատարանի դատական ակտերը իրենց բնույթով, հատկապես դատավարության համատեքստում անձնական և հանրային շահերի ներդաշնակեցման տեսանկյունից նույնական են, ուստի պետք է նույնական դարձնել վարչական դատարանի դատական ակտերի՝ ուժի մեջ մտնելու և կատարման իրավական հիմքերը: Օրինակ, երբ Սահմանադրական դատարանը Սահմանադրությանը հակասող է ճանաչում որևէ օրենսդրական նորմ, ապա այդ նորմն իր ուժը կորցնում է Սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու կամ դրանում նախատեսված ժամկետում, և դրա համար բացարձակապես պարտադիր չէ, որ Ազգային ժողովն ընդունի համապատասխան փոփոխություն կատարելու մասին օրենք: Վարչական արդարադատության արդյունավետությունը գնահատելիս հարկ է ուշադրության կենտրոնում պահել այն հարցը, թե վարչական դատարանի դատական ակտերը ինչ ընթացակարգով են ուժի մեջ մտնում և երաշխավորում իրավական անհրաժեշտ հետևանքները:

Այս հարցում, անշուշտ, առկա է մրցակցային սկզբունքի խելամիտ կիրառման անհրաժեշտություն, քանզի մի կողմից՝ անթույլատրելի է, որ վարչական արդարադատություն իրականացնող ատյանները իրենց դատական ակտերով միջամտեն գործադիր իշխանության մարմիններ-

---

<sup>10</sup> Այսպես, Մքգոնելն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով միակ դատավորն էր այն անձը, որը իրեն հանձնված գործով նախկինում ներկայացրել էր կողմի շահերը, երբ եղել էր բնակարանաշինության նպատակով կառուցապատման նախագծի համար եզրակացություն տվողը: Ընդ որում, այդ եզրակացությունը անմիջականորեն չէր էլ առնչվում քննության առարկա հայցին: Այնուամենայնիվ, ՄԻԵԴ-ը հանգել էր այն դիրքորոշմանը, որ այդ փաստը ինքնին բավարար հիմք էր, որ տվյալ դատավորն ինքնաբացարկ հայտնեի (McGonnell v UK [Մքգոնելը Միացյալ Թագավորության դեմ], ECtHR, 8 February 2000, պարագրաֆ 55):

րի գործունեությանը, օրինակ՝ նրանց փոխարեն անմիջականորեն կարգավորելով վարչաիրավական հարաբերությունները, մյուս կողմից՝ ոչ պակաս մտահոգիչ է, երբ դատական ակտի կիրառումը կախվածության մեջ է դրվում դրա համար պատասխանատու մարմնի հայեցողական դիրքորոշումից: Էլ ավելի անընդունելի է, երբ արդեն իսկ ուժի մեջ մտած դատական ակտի կատարումը փոխկապակցվում է դատախազության կողմից այն բողոքարկելու հանգամանքի հետ, ըստ այդմ էլ այն անհիմն դիրքորոշումն է առաջադրվում, թե իբր բողոքարկման ենթակա՝ ուժի մեջ մտած դատական ակտը ենթակա չէ անհապաղ կատարման: Ընդ որում, այս տեսանկյունից որևէ նշանակություն չունի, թե հանրային իրավահարաբերություններում կոնկրետ հանրային ծառայողի իրավունքների պաշտպանության հիմքում դրված է վարչական դատարանի, թե ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը: Թերևս այսպիսի ակնհայտ անհիմն իրավիճակ ստեղծվեց Բարձրագույն դատական խորհրդի նախագահի լիազորությունների դադարեցման հիմք հանդիսացած մեղադրանք առաջադրելու մասին որոշումը դատական կարգով անհիմն ճանաչվելու գործով<sup>11</sup>:

Որպեսզի վերը նշված արատավոր պրակտիկան ի սպառ բացակայի, հարկ է օրենսդրությամբ հստակ կարգավորել այն հարցը, որ իրավական ուժ ստացած դատական ակտը բավարար ու անհրաժեշտ հիմք է դրանով նախատեսված իրավական հետևանքները վրա հասնելու համար: Սա վերաբերում է հատկապես այն դեպքերին, երբ վարչական մարմինը վարչական ակտ է ընդունում այնպիսի իրավաբանական փաստերի հիմքով, որոնք դատական կարգով ճանաչվում են ոչ իրավաչափ: Այսպիսի դեպքերում լրացուցիչ վարչական ակտեր կայացնելու կարիք չի ծագում, քանզի արդեն իսկ առկա են բավարար հիմքեր իրավունքի ուժով տվյալ վարչական ակտը դատական կարգով ուժը կորցրած ճանաչելու, հրնթացն՝ դատական ակտով նախատեսված իրավական հետևանքները կիրառելու համար: Այլ կերպ ասած՝ նման դեպքերում հարկ է դատական ակտն ընկալել որպես ինքնուրույն իրավաբանական փաստ, որի հիմքով (ոչ թե միջնորդավորված որևէ վարչական ակտով, որի ընդունումը կարող է և միտումնավոր ձգձգվել) անմիջապես ծագում են վարչաիրավական այն հարաբերությունները, որոնք նախատեսված են դատական ակտով:

11) Միջազգային փորձին ծանոթ վարչական դատավարության համակարգերը բաժանվում են երկու մեծ խմբի՝ կախված այն հանգամանքից, թե վարչական դատարան դիմելուց առաջ անհրաժեշտ է սպառել վեճի լուծման արտադատական կարգը, թե՞ ոչ: Միջազգային իրավական փաստաթղթերով երկու տարբերակն էլ համարվում է ընդունելի,

<sup>11</sup> Այս գործի իրավական ասպեկտների մասին տե՛ս հետևյալ հղումով իմ հարցազրույցը, [https://www.armdaily.am/?p=143950&l=am&fbclid=IwAR3eyf\\_HIW\\_bh6CgFdtcuAxx2Y7sFYqL\\_wyQwKXwK7N6YfqK5VrD7plto](https://www.armdaily.am/?p=143950&l=am&fbclid=IwAR3eyf_HIW_bh6CgFdtcuAxx2Y7sFYqL_wyQwKXwK7N6YfqK5VrD7plto)

սակայն երկու դեպքում էլ առաջնային է համարվում արդար դատաքննության իրավունքի հարգման անհրաժեշտությունը: Մասնավորապես, բոլոր այն դեպքերում, երբ պարտադիր է համարվում մինչև վարչական դատարան դիմելը վեճն արտադատական կարգով լուծելը, այսինքն՝ վերադատության կարգով բողոքարկելը, ապա պարտադիր է, որ արտադատական կարգն ուղեկցվի առնվազն հետևյալ երաշխիքներով.

- դիմումի քննարկման համար սահմանվում է սեղմ ժամկետ, մասնավորապես՝ առավել ողջամիտ է համարվում առավելագույնը 20-օրյա ժամկետը,

- վերադաս վարչական մարմինը մերժելու դեպքում ինքն է դատարանում հանդես գալիս որպես պատասխանող,

- դիմումը սահմանված ժամկետում չքննելու կամ քննության արդյունքներով սահմանված ժամկետում չպատասխանելու դեպքում համարվում է, որ դիմումը մերժվել է, իսկ դատաքննության փուլում վարչական դատարանը գրկվում է կողմի՝ լավելու իրավունքից:

12) Հայրենական օրենսդրությունը զիջում է վարչական արդարադատության միջազգային չափանիշներին նաև լեզվական խոչընդոտները հաղթահարելու տեսանկյունից: Խնդիրն այն է, որ առավելապես ուշադրություն է դարձվել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին և մասամբ էլ լեզվին չտիրապետող անձանց թարգմանիչներով սոսկ մասնակի ապահովելուն, մինչդեռ ներկայումս, տարրական գրագիտությունից զուրկ անձանց շրջանակի կտրուկ ավելացմամբ պայմանավորված, հարկ է վերանայել իրավական հիմքերը և անհրաժեշտ երաշխիքներ սահմանել բոլոր այն անձանց համար, որոնք այս կամ այն պատճառով բավարար չեն տիրապետում գրավոր խոսքին, ուստի ի վիճակի չեն հաղթահարելու լեզվական խոչընդոտները: Ընդ որում՝ գրավոր խոսքին չտիրապետող անձանց թվաքանակը արդեն հասնում է մտահոգող չափերի ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում<sup>12</sup>, ուստի լեզվական խոչընդոտները հաղթահարելու խնդիրը խիստ այժմեական է:

13) Վարչական արդարադատության առանձնահատկություններին է վարչական մարմնի տրամադրության տակ եղած գործին անմիջականորեն առնչվող տեղեկատվության առկայությունը, ինչը հաճախ վարչական մարմինները տարբեր պատճառաբանությամբ խուսափում են ներկայացնել դատարան: Այս վարքագծին համահունչ դատավարական կանոններ, կարծում ենք, դեռևս սահմանված չեն, ընդ որում վարչական մարմինների նկատմամբ ազդեցության միջոցներ կիրառե-

<sup>12</sup> Ներկայումս աշխարհում 780 մլն մարդ չի կարողանում գրել և կարդալ, ընդ որում՝ մեծ տոկոս են կազմում հատկապես երիտասարդ կանայք: Մի հետաքրքիր փաստ ևս՝ մուսուլմանական երկրներում բնակչության 6 տոկոսը գրել ու կարդալ չգիտի, մինչդեռ աշխարհում անգրագիտության միջինը բավականին բարձր է՝ 14 տոկոս (<https://tass.ru/obschestvo/1646440>): Նկատի ունենանք, որ միայն 6 երկրում է գրագիտությունը կազմում 100 տոկոս՝ Վատիկան, Լյուքսեմբուրգ, Լիխտենշտեյն, Իսպանիա, Նորվեգիա, Գրենլանդիա (<https://ru.wikipedia.org/wiki>):

լու տեսանկյունից կաշկանդված են նաև դատարանները: Այս իրավիճակը հուշում է, որ հարկ է ներդնել վարչական մարմինների կողմից շարունակվող անգործությանը համարժեք հակազդելու առավել գործուն միջոցներ: Օրինակ, փաստաթղթեր և այլ անհրաժեշտ նյութեր ներկայացնելուց խուսափելու դեպքում, օրենքով անհրաժեշտ է հստակ սահմանել, որ վիճարկվող հանգամանքը միանշանակ պետք է մեկնաբանվի հոգուտ մասնավոր անձի:

14) Կարևոր հարցադրումներից է դատական ակտի կատարման արդյունավետ ապահովման խնդիրը: Ինքնին հասկանալի է, որ վերջնական դատական ակտը որևէ արժեք չի կարող ունենալ, եթե այն չի ուղեկցվում կատարումը երաշխավորող կառուցակարգերով: Սա չափազանց բարդ և միաժամանակ միմյանց հետ մրցակցող գործոնների ճշգրիտ ներդաշնակեցումն ապահովելու խնդիր է: Հարկ է այնպիսի լուծումներ առաջադրել, որ ապահովվեն դատական ակտի կատարումը և կանխարգելվեն անհարկի խոչընդոտները: Այս տեսանկյունից, թերևս, առավել ողջամիտ է դիտվում այնպիսի դիրքորոշումը, երբ առանձին վարչական ակտերի կասեցումը անմիջականորեն նախատեսվում է օրենքով, իսկ մյուսների պարագայում կասեցնելու լիազորությունը թողնվում է դատարանի հայեցողությանը:

15) Վարչական արդարադատության առանցքային հարցադրումներից հաջորդը դատավարական հնարավորինս մատչելի, պարզ ընթացակարգեր ներդնելն է: Ընդհանրապես, դատավարական բարդ կանոնները կարող են հիմնավորված համարվել, եթե դրանք անվերապահորեն երաշխավորում են արդարադատության շահերի պաշտպանությունը, հակառակ պարագայում դրանք պարզապես հանգեցնում են անիմաստ ձգձգումների, անհիմն բեռ են դառնում դատավարության կողմերի համար և այլն: Խոսքը նաև դատավարության առանձին փուլերի, ինչպես նաև որոշ հնարավոր դեպքերում՝ ողջ դատավարության ընթացքը էլեկտրոնային համակարգերի միջոցով իրականացնելու մասին է:

Չանտեսենք, որ անհիմն բարդացված ընթացակարգերը լրջագույն աղերսներ ունեն նաև դատավարության ողջամիտ ժամկետների պահպանման հետ: Ընդ որում, առանձին գործերով ողջամիտ ժամկետները պայմանավորված են ոչ այնքան գործի բարդությամբ, որքան բուն գործի բնույթով, մասնավորապես՝ արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության շահերից է բխում այնպիսի գործերը սեղմ ժամկետում քննելու անհրաժեշտությունը, ինչպիսիք են, օրինակ՝ որդեգրման, հաշմանդամության կարգի, ծերության թոշակի հետ կապված և նմանաբնույթ այլ հայցադիմումները<sup>13</sup>:

Միաժամանակ շատ կարևոր է, որ ողջամիտ ժամկետները պահ-

---

<sup>13</sup> St´u, օրինակ, Mūnoz Hermoza v Peru [Մունյոս Էրմոսան ընդդեմ Պերուի], HRC Communication 203/1986, UN Doc CCPR/C/34/D/203/1986 (1998), պարագրաֆ 11.3; Fei v Colombia [Ֆեյն ընդդեմ Կոլումբիայի], HRC Communication 514/1992, UN Doc CCPR/C/53/D/514/1992 (1995), պարագրաֆ 8.4:

պանելու պատրվակով չխաթարվի դատավարության կողմ հանդիսացող մասնավոր անձի արդար դատաքննության իրավունքը, այլ կերպ ասած՝ հարկ է նախապատվությունը տալ այնպիսի ընթացակարգերի, որոնք կողմերին իրենց դատավարական պարտականություններն արդյունավետ իրականացնելու ողջամիտ ժամկետներ են ընձեռում:

16) Դատավարության ցանկացած տեսակի (իսկ վարչական դատավարությունը չի կարող բացառություն լինել) բնորոշ է մրցակցության սկզբունքը, քանզի այն արդար դատաքննության իրավունքի կարևորագույն երաշխիքներից է: Այս հարցում ծայրահեղություններն անթույլատելի են, ուստի առնվազն իրավաչափ չէ օրենսդրությամբ մրցակցության սկզբունքի ամրագումն անտեսելը (նկատի ունենք ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը): Մյուս կողմից՝ վարչական դատավարությունը չի կարող ամբողջովին մրցակցային լինել, քանի որ առնվազն երկու հիմնարար պատճառ դա բացառում են՝ ա) կողմերը չունեն փաստացի հավասար հնարավորություններ, և բ) դատավարության ենթակա հարցերն ակնհայտորեն առանձնանում են հանրային նշանակությամբ:

Վերը նշված գործոնների հաշվառմամբ՝ առավել արդյունավետ կարող է համարվել այնպիսի վարչական արդարադատության համակարգը, որի պարագայում ներդաշնակ հարաբերակցության մեջ են մրցակցության և հետաքննության<sup>14</sup> սկզբունքները: Երկու սկզբունքներից որևէ մեկին նախապատվություն տալը չափազանց վտանգավոր է, առնվազն հակասահմանադրական, սակայն դրանց խելամիտ հարաբերակցությունը միանշանակ խրախուսելի է, որպիսի մոտեցումը ամրագրված է նաև միջազգային իրավական փաստաթղթերով<sup>15</sup>:

Ընդ որում, հետաքննության սկզբունքը, որը դատարանին լիազորում է միջամտելու ապացույցների ձեռքբերման գործընթացին և առանձին դեպքերում նաև իր նախաձեռնությամբ ձեռք բերելու այդպիսի ապացույցներ, կարող է հիմնավորված համարվել, եթե հանգեցնում է կողմերի փաստացի հնարավորությունների հավասարությանը, այսինքն՝ ուղղված չէ մասնավոր անձանց փաստարկների հերքմանը՝ հոգուտ վարչական մարմնի: Բացառիկ դեպքերում, երբ հանրային շահը նկատելիորեն գերակայում է տվյալ վարչական գործի քննության համատեքստում, դատարանի հետաքննության գործառույթները կարող են արդարացված համարվել:

Հնարավորությունների (հաճախ փոխաբերական իմաստով օգտագործում են «զենքեր» տերմինը) հավասարության երաշխիքներից է

<sup>14</sup> «Հետաքննություն» եզրույթը այս նյութի համատեքստում ընդհանուր ոչինչ չունի վերջինիս քրեադատավարական իմաստի հետ: Այն քննարկվող դեպքում առավելապես նույնացվում է գործի հանգամանքները ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքին:

<sup>15</sup> Տե՛ս, օրինակ, Lobo Machado v Portugal [Լոբո Մաչադոն ընդդեմ Պորտուգալիայի], ECtHR, 20 February 1996, para 31; Feldbrugge v The Netherlands [Ֆելդբրյուրգեն ընդդեմ Նիդերլանդների], ECtHR, 29 May 1986, պարագրաֆներ 42-46:

նան վարչական մարմնի տիրույթում գտնվող և դատավարության տեսանկյունից ապացուցողական նշանակություն ունեցող փաստաթղթերը դատավարության կողմ հանդիսացող մասնավոր անձին հասանելի դարձնելը և, ինչպես արդեն նշվեց, խոչընդոտներ ստեղծելու և նշված փաստաթղթերը դատարան ներկայացնելուց խուսափելու դեպքում ապացուցված համարել կոնկրետ փաստաթղթով ապացուցման ենթակա հանգամանքի առնչությամբ մասնավոր անձի դիրքորոշումը:

17) Կարևորագույն հարցադրումներից է նաև դատական ակտի որակին ներկայացվող պահանջների շրջանակը: Կոնկրետ հայրենական վարչական արդարադատությանը բնորոշ պրակտիկան, անտարակույս, խիստ խոցելի է: Մի քանի նկատառումներ այս առնչությամբ. ա) դատական ակտերն անհարկի ծավալուն են, հագեցած են տվյալ գործի հետ անմիջական առնչություն չունեցող իրավական նորմերի մեջբերումներով, բ) պատճառաբանական մասում հիմնականում վերլուծվում են ոչ թե ներկայացված ապացույցները, այլ հղումներ են արվում իրավական ակտերի նորմերի վրա, գ) ոչ միշտ են բավարար չափով, հստակ ու միանշանակ, որի պատճառով անհարկի մեծ է պարզաբանումների համար դիմումների, ինչպես նաև հանրային հնչեղություն ունեցող գործերով տարաբնույթ, անգամ իրարամերժ մեկնաբանությունների տոկոսը և այլն: Իրավահամեմատական վերլուծությունը վկայում է, որ միջազգային փորձի համատեքստում դատական ակտերը առավելագույնը 3-4 էջ են, դրանք չեն պարունակում օրենսդրական նորմերի մեծածավալ մեջբերումներ, հնարավորինս զերծ են խրթին մտքերից, ինչպես նաև նեղ մասնագիտական եզրութաբանությունից, իսկ պատճառաբանությունները հնարավորինս առարկայական են:

18) Վերջապես, առանցքային է համարվում դատական ակտերի կատարման ինստիտուտը: Միջազգային իրավական չափանիշների տեսանկյունից նախ անընդունելի է համարվում գործադիր իշխանության կենտրոնական մարմիններից դատական ակտերի հարկադիր կատարման մարմինների կախյալ կարգավիճակը: Ուստի առավել խրախուսելի և հիմնավորված կարող են համարվել հետևյալ լուծումները՝ ա) դատական ակտերի հարկադիր կատարման մարմին անկախ կարգավիճակ վերապահելը, բ) դատական ակտերի հարկադիր կատարման գործառույթները վերապահել դատական իշխանության աշխատակազմին, գ) դատական ակտերի հարկադիր կատարման գործառույթը լիազորել մասնավոր հատվածին և այլն: Ընդ որում, այս տարբերակները կարող են կիրառվել նաև զուգահեռ՝ որոշակի համամասնությամբ՝ հնարավորություն ընձեռելով հասցեատիրոջն ընտրելու իր պատկերացմամբ առավել օպտիմալ տարբերակը:

Ամփոփելով վարչական արդարադատության մոնիթորինգի հիմնադրույթների վերաբերյալ մեր նկատառումները՝ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ գիտագործնական չափանիշներով մոնիթորին-

գի ձեռնարկ պատրաստելը ներկայումս խիստ անհրաժեշտ է, այն հնարավորություն կտա նախապես համարժեք և սպառիչ առանձնացնելու այն հարցադրումները, որոնց վերաբերյալ ձեռք բերված վերլուծական և վիճակագրական նյութը կծառայի իր բուն նպատակին՝ արդյունավետ դատաիրավական բարեփոխումների իրականացմանը:

Հավելենք, որ մոնիթորինգի հիմնադրույթների վերաբերյալ սույն հետազոտությունը գիտագործնական նշանակություն ունի նաև դատավարության մյուս տեսակների ուսումնասիրության և ընդհանրապես իրավագիտության մյուս հրատապ հարցադրումների համալիր հետազոտության ու արդյունքում կուտակված հիմնախնդիրները լուծելու տեսանկյունից:

**ГЕВОРГ ДАНИЕЛЯН – *Некоторые вопросы методологии мониторинга административной юстиции.*** – В статье исследуются научные основы комплексного анализа и оценки компонентов административной юстиции. Результаты исследования устанавливают критерии оценки эффективности административного производства, которые имеют не только теоретическое, но и практическое значение, поскольку позволяют оценить всю систему административного производства, выявить пробелы, недостатки, а также основные способы и методологию их устранения.

В статье адекватно анализируется прецедентное право Европейского суда по правам человека, а также решения Конституционного суда, позиции международных экспертных организаций, современные подходы ведущих специалистов, в результате чего определены необходимые критерии эффективного мониторинга административной юстиции. При этом их разработка исходила из особенностей отечественной правовой базы административной юстиции и практики их применения.

Согласно представленному в статье заключению, наличие методологии мониторинга не исключает возможности исследования с новыми аспектами, просто с чисто научной точки зрения необходимо гарантировать хотя бы необходимую комплексность анализа.

**Ключевые слова:** административная юстиция, мониторинг, административное судопроизводство, административный суд, административное производство, право на справедливое судебное разбирательство, административный акт, исполнение судебного акта

**GEVORG DANIELYAN – *Issues of Monitoring Methodology of Administrative Justice.*** – The article examines the scientific foundations of a comprehensive analysis and evaluation of the components of administrative justice. Criteria for evaluating the effectiveness of administrative procedure were put forward based upon the findings of this research. Not only has it a theoretical significance, but rather a practical one, as it allows to evaluate the entire system of administrative procedure, to identify the existing gaps and shortcomings, as well as to suggest fundamental ways of resolving the issues raised, as effectively as possible.

The article analyzes the relevant precedent decisions of the ECHR, as well as the decisions of the Constitutional Court, the positions of international expert institutions and the contemporary approaches of narrowly focused specialists. As a result, to the extent possible, the criteria necessary for the effective monitoring of administrative

justice were put forward in a systemized way. It is also worth mentioning, that those criteria have been developed based on the particularities of the domestic legal foundations of administrative justice and of their practical application.

According to the conclusion put forward in the article, the presence of a monitoring methodology does not exclude the possibility of research from new angles. It is just that from a purely scientific-practical standpoint, the monitoring methodology is extremely necessary so to guarantee the needed comprehensiveness of the analysis.

**Key words:** *administrative justice, monitoring, administrative process, administrative court, administrative proceedings, the right to a fair trial, administrative act, execution of a judicial act*